




ՓԵՍԱՑՈՒ ՄՈՒԿԸ



ՀԷՐԻԱՐ

Ա.Թ. ԽՆԿՈՑԵԱՆ




ՓԵՍԱՅՈՒ ՄՈՒԿԸ

A
I
15074

Մուկը ուզեց ամուսնանալ
եւ հրգօրին փեսայ դառնալ:
Նրան ասին, որ աշխարհում
արեգակն է միայն հրգօր:
Մուկը տեղից վեր է կենում,
վեր է կենում ու փառաւոր
մի գարնան օր, ջերմ առաւօտ,
ուղիղ գնում արևի մօտ:



111491511491



Գնում, ասում.

«Բարև, բարև,

էս աշխարհի հրգօր արև.

քո դատրիկը հեզիկ-նազիկ,

հեզիկ-նազիկ, ոսկեմազիկ,

տուր ինձ՝ տանեմ, անեմ հարսիկ»:

—Ես ռրտեղի հրգօրն եմ որ...

տես, էն ամպն է ինձնից հրգօր:


Մին էլ տեսար արագ-արագ,

քաթանի պէս երկար-բարակ,

տարածւում է կապուտակում,

վարագոյրով ղէմքս ծածկում,—

արեգակը մկանն ասաւ:



F. Pa.

Մ ու կը վազեց ամպին հասաւ.

«Ս,յ հըզօր ամպ, բարև, բարև,
ո՛ւր ես գնում վերև, վերև.

քո դստրիկը հեզիկ-նազիկ,
հեզիկ-նազիկ, ոսկեմազիկ,
տուր ինձ՝ տանեմ, անեմ հարսիկ»:

—Ես ռրտեղի հըզօրն եմ որ,
այ քամին է ինձնից հըզօր:
Որ բարկացաւ, էլ գութ չունի.
ուր ուզենայ ինձ կը տանի.
նա ինձ կանի փաթիլ-փաթիլ,
ու կը քամի կաթիլ-կաթիլ:




F-P.

Մուկը վազեց հասաւ քամուն,
ասաւ.


«Քամի, հըզօր ես դուն.
ամպին կանես փաթիլ,-փաթիլ
ու կը քամես կաթիլ-կաթիլ.
քո դստրիկը հեզիկ-նազիկ,
հեզիկ-նազիկ, ոսկեմազիկ,
տոնը ինձ՝ տանեմ, անեմ հարսիկ»:

—Ե՞ս եմ հըզօր, երանի քեզ...
չէ, չէ, մկնիկ, դու խաբւել ես.
զօրեղ տեսնես դու սև գոմշին.
կուգեմ պոկեմ, բերեմ կաշին,
բայց սրտեղից... ինչո՞ւ տէր եմ,
որ ուզածս պոկեմ, բերեմ:




R. Pa.

Մուկը դիմեց գոմշին արտում,
լուծ քաշելիս, տխուր-տրտում:
«Գոմէշ, ասաւ, դու հըզօր ես,
դու հըզօր ես, ուժի տէր ես.
քո դատրիկը հեզիկ-նազիկ,
հեզիկ-նազիկ, ոսկեմազիկ,
տուր ինձ՝ տանեմ, անեմ հարսիկ»:
—Ե՞ս եմ հըզօր ու ուժի տէր...
Որ էտպէս է, բա էս անտէր
գութանն ի՞նչ է ինձ չարչարում
ու իմ ուսիս ցաւ պատճառում:



Գոմշին թողեց, վազեց զնաց,
«Հըգօր գութան, ասաւ, մի կաց:
Օրօր, շորոր արտ ես վարում,
ոլոր-մոլոր ակօս շարում.
բանի, բանի լուծ ու լծկան
ճիպոտի տակ քեզ քաշող կան.
քո դատրիկը հեզիկ-նազիկ,
հեզիկ-նազիկ, ոսկեմազիկ,
տուր ինձ՝ տանեմ, անեմ հարսիկ»:
—Ուժիս գովքը այլ կերպ կը տան.
հըգօրն ո՞վ է, էն էլ գութան...
Որ հըգօր եմ—ինչո՞ւ համար
հողի միջին մութ ու խաւար
էն թիզ ու կէս,
գետնի բզէզ,
արմատ ու սէզ
ինձ ջարդում են ուզածի պէս:



«Արմատ, արմատ, հըզօր արմատ,
ասաւ փեսայ Մուկը մի մատ.
դու շատ զօւ ես, դու հըզօր ես,
գուժանին էլ դու կը կոտրես.
քո դատրիկը հեզիկ-նազիկ,
հեզիկ-նազիկ, ոսկեմազիկ,
տուր ինձ՝ տանեմ, անեմ հարսիկ»:

—Արմատը ո՞վ, հըզօրը ո՞վ...
վեր կաց գնա դու մկան բով.
այ ձեր ցեղը շատ հըզօր է,
գետնի միջին բուն կը փորէ,
կը որոնէ սէզ ու արմատ,
կուտէ, կուտէ հա անընդհատ:



Մոռկը վազեց մի մկան մօտ,
ասաւ.

— «Նանի, մեր հին ծանօթ,
այ գութանը խօսքիս վկայ,
քեզնից հըզօր չը կայ, չը կայ.
քո դատրիկը հեզիկ-նազիկ,
հեզիկ-նազիկ, ոսկեմազիկ,
տուր ինձ՝ տանեմ, անեմ հարսիկ»:

— Բարով, մկնիկ, բարով տեսայ,
էտպէս բան կայ, դէհ շուտ ասա,
ես քեզ զոքանչ, դու ինձ փեսայ.
իմ աղջիկը հեզիկ-նազիկ,
հեզիկ-նազիկ, ոսկեմազիկ,
կը տամ ես քեզ, արա հարսիկ:—



Մուկը մկան արաւ փեսայ.
 Էս աշխարհի օրէնքն է սա:

Աթ. Խնկոյեան

